

Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի
գիտխորհրդի 2018թ.-ի դեկտեմբերի 3-ի որոշմամբ
Արձանագրություն № 01-12/18
գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

Գ.Շ. Գալստյան

ԿԱՆՈՆՆԵՐ

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԷԹԻԿԱՅԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի(այսուհետ՝ Համալսարան) Էթիկայի կանոնները սահմանում է Համալսարանում գործարար կապի իրականացման, աշխատողների և ուսանողների փոխադարձ հարաբերությունների, վարքի ու վարքագծի դրսևորման սկզբունքները, ակադեմիական ազնվության քաղաքականությունը (այսուհետ՝ Էթիկայի կանոններ) և դրանց ապահովման դրույթները:
2. Էթիկայի կանոնները կիրառվում են Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, դեկանների, ամբիոնի վարիչների, վարչական և սպասարկող անձնակազմի, ուսումնաօժանդակ, տնտեսական և այլ աշխատողների(այսուհետ՝ աշխատողներ), ասպիրանտների, ուսանողների (այսուհետ՝ ուսանողներ) հարաբերություններում:
3. Սույն կանոնների հիմնական նպատակն է ծառայողական վարքի Էթիկայի նորմերի և կանոնների հաստատումը, կիրառման խթանումը, աշխատողների և ուսանողների միջև օրինակելի վարքագծի և հարգալից հարաբերությունների ապահովումը, Համալսարանի հեղինակության, վարկանիշի, կորպորատիվ և կազմակերպական մշակույթի ամրապնդումը:
4. Սույն կանոնները բարոյաէթիկական վարքագծի դրսևորման չափանիշներ են, որոնք տարածվում են Համալսարանի բոլոր աշխատողների և ուսանողների վրա, ինչպես նաև կիրառվում են արտաքին միջավայրի հետ փոխգործունեության ժամանակ:
5. Էթիկայի կանոնները միասնական են Համալսարանի կոլեկտիվի համար: Համալսարանի աշխատողները և ուսանողներն ինքնակամ են իրականացնում Էթիկայի սկզբունքները, կանոնները և սահմանված պարտականությունները:

II. Էթիկայի կանոնները

6. Համալսարանի աշխատողները և ուսանողները *հարաբերություններում* առաջնորդվում են համագործակցության, *փոխադարձ հարգանքի, գործարար էթիկայի, արդարության, ազնվության և այլ սկզբունքներով:*

7. Համագործակցությունը աշխատողների միջև՝

- 1) Կոլեկտիվում հարաբերությունները կառուցվում են համերաշխության, համագործակցության բարենպաստ մթնոլորտի պահպանման, արդյունավետ աշխատանքի և հանգստի ապահովման սկզբունքներով.
- 2) Արհեստավարժությունը և կառուցվածքային համագործակցությունը Համալսարանի գործունեության արդյունավետության գերակա խնդիրներն են: Համալսարանի աշխատողները աջակցում են գործարար և ընկերական փոխհարաբերությունների հաստատմանը.
- 3) Աշխատանքային գործընթացում առաջացող խնդիրները լուծելիս աշխատողներն առաջին հերթին առաջնորդվում են օբյեկտիվության և արդարության սկզբունքներով՝ պահպանելով էթիկայի կանոնները.
- 4) Ստորաբաժանումների միջև տարածայնությունների դեպքում խնդրի լուծման գերակա ուղղությունը Համալսարանի շահերի ապահովումն է.
- 5) Աշխատողներն իրավունք չունեն քննարկել գործընկերների թերությունները և անձնական կյանքի վերաբերյալ հարցեր, ցուցաբերել կոպիտ և անհարգալից վերաբերմունք, պատճառել բարոյական կամ նյութական վնաս.
- 6) Բոլոր աշխատողները պարտավոր են աջակցել Համալսարանին՝ վարկանիշի, համբավի և հեղինակության բարձրացման ու ամրապնդման գործում, գերծ մտալով այնպիսի վարքագծից, որը կարող է վնասել այդ հեղինակությանը: Դա ենթադրում է, որ աշխատողը իր վարքագծում և մասնագիտական գործունեության մեջ պետք է ձգտի հետևողականորեն կատարել իր պարտականությունները, պահպանելով վարքի և գործնական էթիկայի հաստատված նորմերը և համընդունված կանոնները.
- 7) Աշխատողը անընդհատ պետք է վերահսկի իր վարքը, զգացմունքները, թույլ չտալով անձնական համակրանքի և տրամադրության ազդեցությունը գործնական որոշումների վրա, կարողանա կանխատեսել սեփական գործողությունների և որոշումների հետևանքները, հավասարապես կոռեկտ վերաբերվել գործընկերներին և ուսանողներին՝ անկախ ծառայողական դիրքից և սոցիալական վիճակից.
- 8) Աշխատողի և ուսանողի միջև հարաբերությունը բոլոր դեպքում պետք է լինի պատշաճ, համապատասխանի մասնագիտական բարձր չափանիշներին և բարոյաէթիկական սկզբունքներին: Ոչինչ չպետք է արատավորի աշխատողների և ուսանողների գործնական հեղինակությունը.
- 9) Աշխատողները պարտավոր են հավատարիմ մնալ անձնական և մասնագիտական վարքի ընդունված չափանիշներին, կատարելով իրենց աշխատանքը արդյունավետ և բարեխղճորեն: Նրանք պետք է լինեն անկախ՝ եզրակացություններ և որոշումներ կայացնելիս:

8. Վարչակազմի և աշխատողների համագործակցությունը՝

- 1) Համալսարանն իր աշխատողների հետ հարաբերությունները կառուցում է երկարաժամկետ համագործակցության սկզբունքների, հարգանքի և փոխադարձ պարտավորությունների ճշգրիտ կատարման վրա: Ե՛վ Ռեկտորը, և՛ աշխատողները պարտավոր են իրենց գործունեության ընթացքում կատարել բոլոր պայմանները և պարտավորությունները, որոնք նախատեսված են աշխատանքային պայմանագրով.

- 2) Ղեկավար աշխատակազմը պետք է ունենա անբասիր հեղինակություն, արդարության օրինակ ծառայի, նպաստի կոլեկտիվում արդյունավետ աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Ղեկավարը իրավունք չունի իր պարտականությունների կատարումը հանձնարարել գործընկերներին կամ ենթականերին.
 - 3) Աշխատանքային հարցեր քննարկելիս անթույլատրելի է ղեկավարության և աշխատողների կողմից միմյանց վրա ճնշում գործադրելը, ինչպես նաև այնպիսի որոշումների կայացումը, որը չի համապատասխանում արդարության սկզբունքներին և Համալսարանի շահերին: Նույն պաշտոնական մակարդակում գտնվող աշխատողների միջև խնդիրները լուծվում են նույն պաշտոնական մակարդակի աշխատողների կողմից՝ առանց ներգրավելու ղեկավար կազմին.
 - 4) Վարչակազմը հաշվի է առնում աշխատողների անձնական շահերը և նրանց արժեքային առաջնայնությունները, նպաստում մասնագիտական զարգացմանը.
 - 5) Համալսարանի բոլոր աշխատողները ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ կարիերայի զարգացման հարցում.
 - 6) Համալսարանի աշխատողն **առաջին հերթին** քաղաքացի է, հետևաբար հարաբերությունները ղեկավարության հետ և կոլեկտիվում պետք է կառուցվեն հավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքներով.
 - 7) Աշխատողները շահագրգռված են գիտելիքների փոխանակման, գիտական հետազոտությունների իրականացման, կրթական և գիտական գործընթացներում նոր մոտեցումների մշակման գործում, կենտրոնանալով Համալսարանի զարգացման նպատակների և խնդիրների վրա.
 - 8) Աշխատողները չեն իրականացնում գործողություններ, որոնք կհակասեն Համալսարանի շահերին, չեն օգտագործում ծառայողական տեղեկատվությունը սեփական շահերից ելնելով կամ Համալսարանի գործարար համբավին վնաս հասցնելու նպատակով.
 - 9) Աշխատողները կարող են բացահայտ արտահայտել իրենց կարծիքը և առաջարկություններով դիմել կառուցվածքային ստորաբաժանումներին և Համալսարանի ղեկավարությանը՝ ուսումնամեթոդական, գիտական և կազմակերպական հարցերով.
 - 10) Վարչակազմը պարտավոր է քննարկել գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացրած առաջարկությունները՝ ուսումնամեթոդական և գիտական գործընթացների կատարելագործման, ուսուցման նոր արդյունավետ ձևերի և մեթոդների վերաբերյալ.
 - 11) Պրոֆեսորադասախոսական կազմը անընդհատ պետք է զարգացնի սեփական կարողությունները, բարձրացնի որակավորումը և գործնական հմտությունները, մշտապես ձգտի կատարելագործման.
 - 12) Աշխատողները կարող են համատեղել աշխատանքային գործունեությունը այլ կազմակերպությունում աշխատանքի հետ, եթե դա չի ազդում մասնագիտական պարտականությունների որակյալ իրականացմանը և Համալսարանի շահերին:
9. **Համագործակցությունը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների միջև՝**

- 1) Դասախոսները և ուսանողները շփվելիս պարտավոր են դրսևորել հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ, չօգտագործել անպարկեշտ արտահայտություններ.
- 2) Դասախոսները և ուսանողները պարտավոր են պահպանել համաչափ հարաբերություններ՝ հիմնված համագործակցության և փոխադարձ աջակցության վրա.
- 3) Պարապմունքից ուշանալու դեպքում ուսանողը պետք է ներողություն խնդրի և նստի լսարանի մոտակա ազատ տեղում: Դասախոսն իրավունք ունի ուսանողի կարգապահական խախտումը դարձնել քննարկման առարկա: Ուսանողը պարտավոր է ենթարկվել, չմտնելով վիճաբանության մեջ: Դասը ավարտելուց հետո անհրաժեշտ է քաղաքավարի բացատրել ուշացման պատճառը և ներողություն խնդրել դասախոսից.
- 4) Ուսանողի կողմից վիճահարույց վարքի դրսևորման դեպքում դասախոսը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի՝ ուսանողի մոտ զգացմունքային լարվածությունը հանելու համար, այնուհետև հանգիստ բացատրի նրան իրավիճակը և համապատասխան լուծում առաջարկի.
- 5) Դասախոսը պետք է շահագրգռված և հետամուտ լինի ուսանողի կողմից դասընթացի լիարժեք յուրացումն ապահովելու խնդրում: Պարտավոր է նախապես ներկայացնել դասընթացի ծրագիրը և գնահատման չափանիշները:

10. Դասախոսը իրավունք չունի՝

- ա) Նվաստացնել ուսանողների անձնական արժանապատվությունը (բարձրացնել ձայնը ուսանողի հետ խոսելիս, օգտագործել գռեհիկ արտահայտություններ),
- բ) Հրաժարվել բարդ նյութի բացատրությունից: Ժամանակի սղության դեպքում անհրաժեշտ է հայտարարել խորհրդատվության ժամերը՝ լրացուցիչ հարցերին պատասխանելու համար,
- գ) Քննության կամ ստուգարքի հանձնման դեպքում առարկայի ծրագրից դուրս հարցադրումներ կատարել,
- դ) Փոփոխել գնահատման չափանիշները կամ քննության վերահանձնման պայմանները, ելնելով սեփական տրամադրվածությունից,
- ե) Ուսանողների մոտ քննարկել գործընկերների անձնական թերությունները,
- զ) Պահանջել լրացուցիչ վճար կրթական ծառայությունների մատուցման համար,
- է) Ուսումնական պարապմունքներին և այլ դեպքերում անցկացնել քաղաքական կամ կրոնական քարոզչություն,
- ը) Օգտագործել ծառայողական դիրքը անձնական նպատակներով:

11. Ուսանողն իրավունք չունի՝

- ա) մասնակցել այնպիսի գործողությունների, որոնք կապված են խաբեության և անազնվության հետ,
- բ) անհարգալից վերաբերմունք ցուցաբերել համալսարանի աշխատողների և ուսանողների նկատմամբ, օգտագործել գռեհիկ և վիրավորական արտահայտություններ, քննարկել նրանց անձնական կյանքը,
- գ) բացակայել պարապմունքներից կամ ուշանալ առանց հարգելի պատճառի,
- դ) պարապմունքների ընթացքում օգտվել հեռախոսից և զբաղվել կողմնակի գործերով,
- ե) լքել լսարանը առանց դասախոսի թույլտվության,
- զ) համալսարանում օգտագործել ոգելից խմիչքներ,

- է) ծխել համալսարանի մասնաշենքերում,
- ը) դասերին մասնակցել սպորտային համազգեստով (բացառությամբ ֆիզկուլտուրա առարկայի),
- թ) աղբը գցել գետնին կամ թողնել լսարանի սեղաններին:

12. Աշխատողների և ուսանողների վարքի դրսևորման կանոնները`

- 1) Համալսարանի բոլոր աշխատողները և ուսանողները պետք է կատարեն Համալսարանի կանոնադրության պահանջները և ներքին կարգապահության կանոնները.
- 2) Աշխատողները և ուսանողները պարտավոր են ժամանակին ներկայանալ աշխատանքի և դասի.
- 3) Համալսարանում պարապմունքների ժամանակ պահպանել լռություն, լինել կարգապահ.
- 4) Դասախոսները և ուսանողները պարտավոր են հետևել համալսարանի գույքի պահպանմանը և անվտանգությանը, պարապունքներից հետո և այլ դեպքերում լսարանում որևէ իր, առարկա հայտնաբերելիս այն ներկայացնել դեկանատ:

13. Արտաքին կառույցների և գանգվածային լրատվական միջոցների հետ համագործակցության կանոնները`

- 1) Արտաքին կառույցների հետ համագործակցության ժամանակ Համալսարանն իրականացնում է թափանցիկ և ազնիվ հարաբերություններ, պահպանելով գործնական էթիկայի չափանիշները.
- 2) Արտաքին կառույցների հետ հարաբերություններում Համալսարանը ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով`
 - ա) պատասխանատվություն և հետևողականություն Համալսարանի պարտականություններն իրականացնելիս,
 - բ) էթիկայի սկզբունքների պահպանում,
 - գ) ներկայացվող տեղեկատվության թափանցիկություն,
 - դ) համաձայնության որոնում` տարաձայնությունների և վեճերի առաջացման դեպքերում:
- 3) Համալսարանի անունից հանդես եկող աշխատողները և ուսանողները պահպանում են գործնական վարքի նորմերը և կանոնները, գործում են Համալսարանի շահերից, Համալսարանի գործունեության փաստերը չեն աղավաղում:
- 4) Չանգվածային լրատվական միջոցների հետ փոխհարաբերություններում`
Համալսարանը հանդես է գալիս թափանցիկ և ազնիվ:
Համալսարանի աշխատողները և ուսանողները`
 - ա) գործում են ելնելով Համալսարանի շահերից,
 - բ) ոչ հավաստի տեղեկություններ չեն տարածում:

14. Համալսարանի աշխատողների հակակոռուպցիոն վարքի բարոյաէթիկական չափանիշները

- 1) Կոռուպցիոն վտանգավոր վարքագիծ է համարվում այնպիսի գործողությունը, որը շահերի հակամարտության իրավիճակում ստեղծում է նախադրյալներ և

պայմաններ աշխատողների կողմից շահադիտական նպատակների իրականացման և/կամ առավելությունների ստացման համար,

- 2) Կոռուպցիան վտանգավոր է համարվում ցանկացած իրավիճակում, որը հնարավորություն է ստեղծում իրավական նորմերի և տեղային նորմատիվա-իրավական ակտերի խախտման համար,
- 3) Անկախ զբաղեցրած պաշտոնից, յուրաքանչյուր աշխատող պետք է ձեռնարկի միջոցառումներ, որոնք ուղղված են կոռուպցիոն իրավիճակների կանխարգելմանը,
- 4) Համալսարանի աշխատողները իրենց պարտականությունները կատարելիս պարտավոր են թույլ չտալ անձնական շահագրգռվածություն, որը բերում է կամ կարող է բերել շահերի հակամարտության:

III. Ակադեմիական ազնվությունը

15. Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը կանոնների և ընթացակարգերի համախումբն է, որը պետք է նպաստի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը, և ստեղծի բարենպաստ պայմաններ ուսանողի ուսումնառության համար:
16. Ակադեմիական ազնվությունը նախատեսում է ակադեմիական աշխատանքների կատարումը՝ առանց գրագողության, խաբեության, ստելու, այլ նյութերի օգտագործման վերաբերյալ՝ հղումներով:
17. **Ակադեմիական ազնվության քաղաքականության նպատակն է՝**
 - ա) պահպանել ակադեմիական ազնվության էթիկայի նորմերը և պահանջները,
 - բ) կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները,
 - գ) խթանել կրթության որակի բարձրացումը:
18. **Ակադեմիական անազնվության դրսևորումներն են.**
 - ա) **խաբեությունը.** արտագրությունը այլ ուսանողից, քննության ժամանակ ծածկագրերի օգտագործումը, ինչպես նաև էլեկտրոնային տեխնիկայի օգտագործումը (հեռախոս, ականջակալ).
 - բ) **Գրագողությունը.** այլ անձանց գաղափարների, արդյունքների կամ ձևակերպումների օգտագործումը որպես սեփական մտքեր:

IV. Էթիկայի կանոնների կատարման ապահովման ընթացակարգը

19. Էթիկայի կանոնների կատարումը և ապահովումն իրականացվում է սույն ընթացակարգին համապատասխան:
20. Էթիկայի կանոնների խախտման դեպքում կրթական գործընթացի ցանկացած մասնակից ենթարկվում է պատասխանատվության:
21. Էթիկայի կանոնների խախտում բացասելու նպատակով.
 - 1) **ուսանողը պարտավոր է՝**
 - ա) ժամանակին կատարել և հանձնել ինքնուրույն և անհատական աշխատանքները.
 - բ) Ակտիվորեն մասնակցել պարապմունքներին.
 - գ) Լինել կարգապահ.
 - դ) Դասախոսի և համակուրսեցիների հետ հաղորդակցվելիս պահպանել համակեցության կանոնները.
 - 2) **Դասախոսը պարտավոր է.**

- ա) Ուսանողներին ներկայացնել առարկայական ծրագիրը, հարցաշարը, համապատասխան գրականություն թղթային կամ էլեկտրոնային ձևով.
- բ) Ժամանակին լինել լսարանում՝ լսարանային պարապմունքների համար նշանակված ժամանակացույցի համաձայն.
- գ) Ուսանողներին ժամանակին տեղեկացնել գնահատման արդյունքները.
- դ) Հիմնավորել ուսանողի գնահատականը.
- ե) Պահպանել էթիկայի կանոնները ուսանողների և Համալսարանի աշխատողների հետ հաղորդակցվելիս.
- զ) Ակադեմիական ազնվությունը խախտած ուսանողների աշխատանքները դարձնել քննարկման առարկա:

22. Պատասխանատվություն`

- ա) Կրթական գործընթացի մասնակիցները պետք է հիշեն, որ կրում են պատասխանատվություն էթիկայի կանոնների խախտման համար.
- բ) Ակադեմիական ազնվության խախտման դեպքում մասնակիցներին հայտարարվում է նկատողություն.
- գ) Կրկնակի գրագողության դեպքում ուսանողը դուրս է հրավիրվում քննասենյակից.
- դ) Ակադեմիական ազնվության խախտումների դեպքերը քննարկվում են էթիկայի հանձնաժողովում և տրվում համապատասխան լուծումներ:

23. Էթիկայի կանոնների խախտումը պարապմունքների ընթացքում.

- ա) Էթիկայի կանոնների խախտման արձանագրման դեպքում դասախոսն ուսանողին հայտարարում է բանավոր նկատողություն: Դասախոսի և ուսանողի միջև վեճ ծագելու դեպքում խախտումը քննարկվում է էթիկայի հանձնաժողովում:
- բ) Քննարկմանը պետք է մասնակցեն խախտումը արձանագրած դասախոսը, խախտող ուսանողը(ները):

24. Էթիկայի կանոնների խախտումը քննության ժամանակ.

- 1) Եթե քննության ժամանակ ուսանողը խախտում է էթիկայի կանոնները, իսկ դասախոսը կամ քննող հանձնաժողովի անդամը ունի հիմքեր կասկածելու ուսանողին արտագրության կամ գրագողության մեջ, ապա՝
 - ա) արձանագրվում է էթիկայի կանոնների խախտումը,
 - բ) արձանագրվում է արտագրությունը կամ գրագողությունը և ուսանողը դուրս է հրավիրվում քննական սենյակից,
 - գ) դասախոսը դեպքը ներկայացնում է ամբիոնի վարիչին կամ անհրաժեշտության դեպքում ֆակուլտետի ղեկանին:

25. Էթիկայի կանոնների խախտման դեպքում, խախտող անձին տրվում է՝

- ա) զգուշացում,
- բ) բանավոր կամ գրավոր նկատողություն:

26. Էթիկայի հանձնաժողովը

- 1) Էթիկայի կանոնների պահպանման վերահսկողությունն իրականացնում է համալսարանի էթիկայի հանձնաժողովը:
- 2) Էթիկայի հանձնաժողովը ձևավորվում է ռեկտորի հրամանով,
- 3) Հանձնաժողովը քննարկում է էթիկայի կանոնների խախտման և ակադեմիական անազնվության դրսևորման դեպքերը և տալիս համապատասխան լուծումներ:

IV. Էթիկայի կանոնների մատչելիությունը շահակիցների համար

27. Սույն կանոնները համալսարանի շահակիցներին մատչելի դարձնելու համար այն տեղադրվում է Համալսարանի պաշտոնական կայքի “Փաստաթղթեր” բաժնում (nuaca.am):

V. Եզրափակիչ դրույթներ

28. Սույն կանոնները հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
29. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի որոշումն համալսարանի ռեկտորի ստորագրությամբ հաստատվելուց հետո տասներորդ օրը:

Գիտական քարտուղար՝

3 դեկտեմբերի 2018թ.

Գիտխորհրդի որոշում N°01-12/18

Լ. Յ. Լևոնյան